

ջոցն ու ճանապարհն է ազգային — կրօնական և բարոյական հիմնա-
ւոր և նպատակայարմար դաստիարակութեան, դա միայն լաւագոյն է
չլինելուց: Մանկավարժական ընդունեալ օրէնք է, որ իւրաքանչիւր
ազգի մանուկ այն ժամանակն իւր ազգային — կրօնական և բարոյա-
կան դաստիարակութիւնը դնում է հաստատուն հիման վերայ, երբ նա
իւր դաստիարակութիւնն ու կրթութիւնն սկսում է իւր մայրենի լեզուով
ստանալ ազգային դպրոցի մէջ:

Վասնորոյ մենք համեստաբար խորհուրդ կտայինք ինչպէս մեր ամե-
նայն սիրելի Ազգայնոց, նոյնպէս և նոր — Նախիջևանի հայ — հասարա-
կութեան, որ նոքա 1876 թուին Վեհ. Հայրապետի հրամանաւ Ս. Էջ-
միածնում հրատարակուած Հայոց ծխական դպրոցաց կանոնաց համա-
ձայն հոգ տանէին իւրեանց մանուկները 8-9 տարեկան հասակում տալ
իւրեանց ազգային ծխական և այլ դպրոցները, որովք բարեբաղդաբար
հարուստ է Ն. Նախիջևանը, ուր 4—5 տարի ազգային դաստիարակու-
թեան ոգւով, ծնողական անմիջական հսկողութեան ներքոյ, մայրենի
լեզուի և կրօնի մէջ փոքր ի շատէ զարգանալուց յետոյ, 12—13 տարե-
կան հասակում յանձնել թեմական կամ արքունի բարձրագոյն ուսում-
նարաններին, որով կիսով չափ հարթուած կլինի նոցա յառաջագիմու-
թեան ճանապարհը իւրեանց յառաջագալ ուսումնասութեան ասպա-
րիղի մէջ և թեթեւացած կլինի արքունի ուսումնարանաց հոգսերի բե-
ռը: Տակաւին ինչ ինչ հանգամանքները, որոնք թէ՛ ծանրութիւն են
պատճառում մանուկների ծնողացը նիւթապէս և թէ՛ դժուարացնու-
մեն մանուկների նպատակայարմար դաստիարակութեան գործը, ողջա-
միտ ընթերցողաց թողումք գուշակել:

Մանաւանդ թէ համեմատելով արքունական ուսումնարանների ծրագ-
րի մէջ տեղ տուած Հայոց լեզուի և կրօնի դասերի սակաւաթիւ քանա-
կութիւնը՝ մեր ծխական դպրոցների ծրագրում նշանակուած նոյն դա-
սերի մեծ քանակութեան հետ, ամենայն ոք կհամոզուի, որ վերջնոյս
չորսամեայ դասընթացքում աւելի շատ կանցնի հայ մանուկը Հայոց
լեզուից ու կրօնից՝ քան արքունական ուսումնարանների 7—8 ամեայ
դասընթացքի ամբողջ շրջանում:

ՆԱՄԱԿ ԱԳՔԻՐԱՆԻՑ .

Ահա իրողութիւն մը, որ եթէ այլ ևս ծածկուի, իւր բարոյական և
նիւթական տեսակէտով, կրնայ այս հետեւութիւնները ծագել. —
տեղւոյս ազգայնոց զայրոյթը արդարապէս գրգռել: Բ.) ազգային շինու-
թեանց բարեկարգութեանցն սպառնալ յետոյ, Իրողութիւնը Ագքիւրմա-
նիս երեսփոխան Պ. Խիւղապետիի հաշուետուութեան եղանակն է:
Յիշեալ երեսփոխանը մինչև ցայժմ եկեղեցւոյ ել և մտից հաշիւը
նահապետական եղանակով կը ներկայացնէր Բիշնէի Պօնտիստորեային
Սահայն Գեր. Մակար սրբազանի իւր առաջնորդական դահլը բարձրացած

օրէն ի վեր հրահանգ կը խրկուի Քիշնէէն այսր՝ որպէս զի ըստ այնմ Պ. Խիւղափերտին իր հաշուեմատեանը բարեփոխէ և վաւերացնէ ևս զայն ժողովրդեան կողմանէ նշանակուած հաշուետեսներու ստորագրութեամբ, և ապա յղէ ի Վօնսիստորեայն, Քայց յարգոյ երեսփոխան մեր, մազիւ չափ դեռ իւր հաշուետուութեան եղանակը փոխած չէ՝ կրկին և կրկին Վօնսիստորեայէն խրկուած հրահանգի պահանջման վրայ անգամ, Այս տարի հաշուետես ընտրուեցան հետեւեալ պարոնայք Յովհաննէս Աստուածատուրեան, Կարապետ Երեսփոխեան, Հայրապետ Մէրօճանեան և Թադէոս Գոյմաքճեան, Եւսեբիոս Աստուածատուրեան.

ՆԱՄԱԿ ԱԳՔԻՐՄԱՆԻՑ

Սիրտս լի յուսոյ խայտամար կուգամ խոստովանիլ թէ՛ կենացս մէջը եթէ երբէք զուարթ եւ հեշտ ժամ մը եւ երկու ունեցայ, այն ևս կրկնութիւնն ժամերուն երեկուան հարցաքննութեան և հանդիսին եղան, որք գոգցես այս վայրկենիս, դիւթիչ տպաւորութիւն կազդէ հոգւոյս վրայ դեռ ևս:

Քաղաքիս հայոց երեւելաց միոյն՝ այս է Մեծ. Պ. Մարկոս Աստուածատուրեանի տան շքեղ և ընդարձակ սրահին մէջը, տեղւոյս հայոց պատուաւոր մէկ մասը հաւաքուեցաւ երէկ, և նախագահեց այս հանդիսին քահանայիցն ուսումնասէր Տ. Աբրահամ Մարութեան:

Սրտաշարժ էր հանդիսին սկզբնաւորութիւնը, ուր զոյգ մը շատ մատաղհաս մանկունք հանդիսականաց կեդրոնը երեւցան և իրենց խոնարհ յարգանքը մատուցանելով ամենուն և ուսուցչին, իրենց յատկացեալ տեղը նստան:

Այս մանկտին, որ հազիւ տասն ամիսի չափ իր մանկական ուսումըն կառնէր Մեծ. Պ. Խորէն Ս. Արծրունիէն, էին որդիք Մեծ. Պ. Աբրահամու և Մարկոսի Աստուածատուրեան, առաջին վաճառականացն քաղաքիս:

Նախագահ Տօր կարճ օրհներգութենէն յետոյ Լևոն և Սիմոն զաւակունք նաև տարագիրք Հայաստանի յիշեցիւն զՀայաստան ևս, իրենց այս պահու երգոց զառաջինն նուիրելով նմա, Խնդրեցին իրենց երգեցին. որչափ բարութեամբ և մանկական անմեղութեամբ, այնչափ յանկուցիչ և զմայլելի գեղութեամբ:

Ուսուցչին սկսաւ հարցաքննել զիւր փոքրիկներն հետեւեալ առարկայներու մէջը:

1. Մարկո. (հայ — ուս, և ուս — հայերէն). ուսուցչին իր դասաւանդութեան ընթացքին մէջը, իբր նպաստաւոր դաս մ' հայերէն խօսակցութիւն սորվեցնելու՝ հրահանգներու մէջը այս եղանակն ալ ընտրած էր:

2. Ընթերցանութիւն, և թարգմ. ի ուսերէն.

3. Աշխարհաբար քերականութիւն.